ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԴԱՎԻԹ ԱՐԹՈՒՐԻ

ՎԱԽՈՒՇՏԻ ԲԱԳՐԱՏԻՈՆԻԻ «ՎՐԱՑԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Չոբանյան Պ. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Կոստիկյան Քրիստինե Պետրոսի

պատմական գիտությունների թեկնածու Մարգարյան Գոռ Արարատի

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թ. սեպտեմբերի 8-ին, ժամը 14^{00}- ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. հունիսի 19-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. XV-XVIII դարերի հայոց պատմության բազմաթիվ հարցերի և այդ ժամանակաշրջանում գրված պատմագրական ստեղծագործությունների աղբյուրագիտական ուսումնասիրությունը հայագիտության կարևոր հիմնախնդիրներից է:

Մեծ հասարակական մտածողների, գաղափարախոսների և քաղաքական գործիչների աշխատանքների ուսումնասիրությունը, որոնք ունեցել են կարևոր ազդեցություն հասարակական կյանքի և գիտական մտքի զարգացման վրա, մշտապես արդիական են: Նրանց աշխարհայացքի ձևավորման վրա վճռական դեր են ունենում այն քաղաքական միջավայրն ու պատմական պայմանները, որոնցում նրանք ապրել, ստեղծագործել ու աշխատել են:

Վախուշտիի մեծածավալ աշխատությունը՝ «Վրացական թագավորության նկարագրությունը» և հատկապես նրա երկրորդ մասը, որը ներկայացնում է XV-XVIII դդ. իրադարձությունները, կարևորագույն սկզբնաղբյուր է հայոց պատմության ուսումնասիրության համար: Հայաստանի հյուսիսարևելյան երկրամասերը՝ Լոռի, Տաշիր, Աշոցք, Ջավախք (մասամբ), այս ընթացքում գտնվում էին Քարթլիի թագավորության վարչաքաղաքական կազմում ու ռազմավարական և տնտեսական առումով կարևորագույն դեր ունեին: Նշված տարածքները, ինչպես նաև Տայքը, Կղարջքը, Արդահանը, որոնք գտնվում էին Սամցխեի աթաբեկության, ապա Ախալցխեի փաշայության կազմում, հեղինակի կողմից դիտարկվում էին որպես Վրաստանի մաս: Որպես արդյունք, Վախուշտին շարադրելով Վրաստանի պատմությունը, բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև հիշյալ հայկական տարածքների տնտեսական կյանքի, ժողովրդագրական գործընթացների, այնտեղ տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների վերաբերյալ: Բացի այդ Վախուշտիի ժամանակաշրջանի Վրաստանը, և հատկապես Քարթլիի թագավորությունը, հանդիսանում էր հայության համախմբման կարևորագույն կենտրոն և հայերի՝ այնտեղ ավելի վաղ հաստատված մասը, հասել էր կարևորագույն ձեռքբերումների հատկապես տնտեսության բնագավառում: Միևնույն ժամանակ Հայաստանում տեղի ունեցող այն իրադարձությունները, որոնք անմիջական ազդեցություն էին ունենում Վրաստանի վրա, նույնպես չեն վրիպել Վախուշտիի ուշադրությունից: Այստեղ մեծ թիվ են կազմում հետազոտողների կողմից բազմիցս արծարծված խնդիրներ, ուստի որոշ դեպքերում խուսափել ենք Վախուշտիի հաղորդած նման հանրահայտ տեղեկությունները քննության ենթարկելուց՝ բավարարվելով միայն հեղինակի վկայությունները հիշատակելով:

Վախուշտիի աշխատությունը պարունակում է հարուստ փաստագրական նյութ, ժամանակագրությունը պահպանված է, այն ցույց է տալիս վրացական

թագավորությունների պայքարը միմյանց դեմ, թագավորական իշխանության ու ազնվականության հակասությունները, պարունակում է ժամանակի քաղաքական ու ռազմական գործիչների մասին հարուստ տեղեկություններ, տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները ու դրանց ազդեցությունը Վրաստանի վրա: Այս ամենը «Վրաստանի պատմությունը» դարձնում է արժեքավոր սկզբնաղբյուր ոչ միայն վրացագիտության, այլ նաև տարածաշրջանի բոլոր երկրների՝ այդ թվում հայոց պատմության մի շարք հարցերի լուսաբանման համար: Այս ամենից զատ, աշխատությունը ունենալով աշխարհագրական մաս, հարուստ տեղեկություններ է բովանդակում տեղանունների, վարչական բաժանումների, տարածքների բնակեցվածության, էթնիկ կազմի, տնտեսության մասին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Ատենախոսության նպատակն է՝ «Վրացական թագավորության նկարագրություն» աշխատության աղբյուրագիտական քննությունը հայագիտության տեսանկյունից, Հայաստանին ու հայերին վերաբերող տեղեկությունները վերհանելու, արժևորելու և գիտական շրջանառության մեջ դնելու նպատակ: Առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել Վախուշտի Արքայազնի աշխատության կառուցվածքը, աղբյուրները, տեղը նմանաբնույթ այլ գրվածքների շարքում, միաժամանակ ընդգծելով հայագիտության համար առավել մեծ արժեք ունեցող հատվածները,
- անաչառ քննության միջոցով պարզել հեղինակի վերաբերմունքը Վրաստանում և Հայաստանի հյուսիսարևելյան շրջաններում բնակվող հայերի նկատմամբ և ըստ այդմ, նաև Հայաստանին ու հայերի վերաբերող տեղեկությունների վստահելիությունը ու անաչառությունը,
- որոշել հայության բնակության շրջանները մինչև թուրքական ներխուժումը Հարավային Կովկաս և լեկերի ավերիչ արշավանքները XVIII դարի 20- ական թթ.,
- պարզել հայերի դերը Վրաստանի քաղաքական ու տնտեսական կյանքում ուսումնասիրվող ժամանակաշրջանում,
- որոշել Հայաստանի՝ Վրաստանի վարչական կազմում գտնվող երկրամասերի տեղը վրացական թագավորությունների ու իշխանությունների վարչաքաղաքական կառուցվածքում և տնտեսական համակարգում,
- ներկայացնել Վախուշտիի աշխատությունում առկա Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող քաղաքական բնույթի տեղեկությունները տարածաշրջանում տեղի ունեցող կարևորագույն իրադարձությունների համատեքստում,
- հայագիտության տեսանկյունից ուսումնասիրել Վախուշտիի հեղինակած ատլասները, որոշել դրանց արժեքը, որպես հայոց պատմության սկզբնաղբյուր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ. Ատենախոսության առանցքը կազմել է «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատության քննությունը և կիրառվել են պատմահամեմատական, պատմանկարագրողական, ինչպես նաև պատմաքարտեզագրական մեթոդները: Պատմահամեմատական մեթոդը կիրառել ենք Վախուշտիի հաղորդած տեղեկությունները ճշտելիս, պատմանկարագրողականը՝ այն դեպքերում, երբ անհրաժեշտ էր նկարագրության միջոցով ներկայացնել մեր հեղինակի աշխատանքի կառուցվածքը, բովանդակությունը և այլն, իսկ պատմաքարտեզագրական մեթոդը՝ Վախուշտիի հաղորդած աշխարհագրական տեղեկությունների հետ տարվող աշխատանքների ժամանակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ. Աշխատանքի ժամանակագրական սահմաններն են XV դարի կեսից XVIII դարի կեսն ընկած ժամանակաշրջանը: Ընդ որում, վերին շեմը պահպանված է, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի քանի դեպքերում կա պատմական ակնարկների, ինչպես նաև ավելի վաղ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունների հիշատակման անհրաժեշտություն, որոշ դեպքերում ստորին ժամանակագրական շեմը ստիպված ենք եղել խախտել: Վախուշտիին է պատկանում Վրաստանի պատմության պարբերացման առաջին փորձը ու ըստ այդ պարբերացման մեր կողմից դիտարկվող ժամանակաշրջանը ընդգրկված է նրա՝ «Նոր պատմության» մեջ: Ինչ վերաբերում է նախորդող ժամանակաշրջանին, Վախուշտիի աշխատանքի այդ հատվածը վրացական առավել հին աղբյուրների կրճատ վերաշարադրումն է: Հաշվի առնելով այդ հանգամանքը ներկա ատենախոսությունում չենք անդրադարձել «Պատմության» այդ հատվածին, որը ոչ մի կերպ չի հավակնում ինքնուրույնության ու շարադրված է կրճատումներով: Աշխատանքի տարածական ընդգրկումը հիմնականում սահմանափակվում է Այսրկովկասով[1] ու հարակից ոչ մեծ տարածքներով: Վախուշտին առավել հարուստ նյութ տրամադրում է հատկապես Քարթլիի ու նրա կազմում գտնվող Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների մասին, ուստի մեր աշխատանքում ևս նշված տարածքներին վերաբերող հատվածները կարևոր տեղ են զբաղեցնում:

---

[1] Հաշվի առնելով «Հարավային Կովկաս» և «Այսրկովկաս կամ Անդրկովկաս» եզրույթների շուրջ առկա բանավեճը, նախընտրելի ենք համարել երկրորդի կիրառումը՝ չհետևելով արևմտյան հետազոտողների օրինակին, քանի որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում եզրույթներից և ոչ մեկը չի օգտագործվել: Սակայն պիտի արձանագրենք, որ Հարավային Կովկաս եզրը ևս, մեր աշխատանքում կիրառված է որպես աշխարհագրական, որն իր տարածքային ընդգրկմամբ համընկնում է Այսրկովկասի հետ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Ատենախոսությունը Վախուշտիի աշխատության համապարփակ ուսումնասիրության, նրանում եղած հայերի ու Հայաստանի մասին տեղեկությունների վերհանման, ճշտման, արժևորման առաջին փորձն է, որը հնարավորություն է տվել կարևոր, երբեմն եզակի վկայություններ հայտնաբերել և գիտական շրջանառության մեջ դնել XV-XVIII դարերի հայոց պատմության վերաբերյալ, ինչպես նաև քննության ենթարկել արդեն առկա տեսակետները: Բացի հայերի ու Հայաստանի մասին վկայություններից, «Վրացական թագավորության նկարագրությունը» տեղեկություններ է հաղորդում տարածաշրջանում կատարվող իրադարձությունների, հայ-վրացական առնչությունների, Հայաստանի հյուսիսարևելյան մասի բնակչության կենցաղի, ազգային և դավանական կազմի վերաբերյալ:

Կատարված աշխատանքի ընթացքում հանգել ենք եզրակացությունների, որոնք կարող են լրացնել XV-XVIII դարերի հայոց պատմության որոշ խնդիրների վերաբերյալ առկա մոտեցումները: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել Հայաստանի հյուսիսարևելյան երկրամասերի ազգագրությանը, տնտեսական հնարավորություններին վերաբերող հետազոտություններում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի Հայաստանի Հարակից երկրների պատմության ամբիոնում: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած վեց հոդվածներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ). Ատենախոսությունը շարադրելիս, հաշվի առնելով ժամանակագրական լայն ընդգրկումը, օգտագործվել են խնդրո առարկա ժամանակշրջանին վերաբերող վրացական, հայկական, թուրքական, պարսկական սկզբնաղբյուրներ, հայերեն, վրացերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով հրատարակված բազմաթիվ ուսումնասիրություններ:

Հայագիտության մեջ Վախուշտի Բագրատիոնիի անձը և աշխատությունը գրեթե ուսումնասիրված չեն, թեև նրա աշխատությունը, հատկապես Լ. Մելիքսեթ-Բեկի կատարած մասնակի թարգմանությունը հայերեն, հայ հետազոտողները բազմիցս օգտագործել են[2]: Լ. Մելիքսեթ-Բեկը՝ բացի թարգմանությունից, իր աշխատանքում տալիս է նաև հեղինակի մասին համառոտ կենսագրական ակնարկ և ներկայացնում նրա

[2] Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին, Ա-Գ մեկ կազմում, Երևան, 2013, էջ 28-92;

մատենագրական ժառանգությունը: Հայ գիտական շրջանակներին հայտնի են հեղինակի աշխատության՝ Մ. Ջանաշվիլու[3] և Ն. Նակաշիձեի կատարած ռուսերեն թարգմանությունները[4]: Մ. Ջանաշվիլու աշխատասիրությամբ կատարված թարգմանությունը ներառում է Վախուշտիի աշխատության աշխարհագրական մասը: Հեղինակն այս աշխատության սկզբում առաջաբանի փոխարեն ներառել է «Վախուշտին ու իր աշխատությունը» հոդվածը, որում հանգամանորեն անդրադառնում է վերջինիս կյանքին և գործունեությանը, մատենագրական ժառանգությանը: Այս աշխատանքի արժանիքներից է նաև այն, որ թե՛ վրացերեն[5], թե՛ ռուսերեն գրքերը հրատարակվել են անմիջապես ձեռագրից[6]: Նակաշիձեի իրականացրած թարգմանությունը ներառում է Վախուշտիի աշխատության պատմական մասի նոր շրջանը: Այս թարգմանությունը իրականացվել է *Քարթլիս Ցխովրեբայի*[7] (Քարթլիի կյանք, վարք) 1973 թ. հրատարակությունից:

Վախուշտիի ամբողջական աշխատությունը ներառյալ Վրաստանի աշխարհագրական նկարագրությունը, բացառությամբ ատլասների հրատարակել է Ս. Ղաուխչիշվիլին 1973 թ. որպես Քարթլիս Ցխովրեբայի IV հատոր[8]: Այս հրատարակությունը իրականացվել է ձեռագրերի հրատարակման բոլոր կանոններով, հեղինակի լեզվի ու հաղորդած նյութի լիակատար պահպանմամբ, և համալրվել է ծանոթագրություններով: Վախուշտիի աշխատանքների վերջին հրատարակությունը ներառված է Քարթլիս Ցխովրեբայի նոր շարքում՝ IV[9] և V[10] հատորներում: Ընդ որում, IV

---

[3] Տե՛ս Имперское русское географическое общество, Кавказский отдел, Записки 1904 г., книга 24, вып. 5, Царевич Вахушти, География Грузии, Пер. М. Джанашвили, Тифлис, 1904.

[4] Տե՛ս Вахушти Багратиони, История Царства Грузинского, перевод Н.Т. Накашидзе, Тбилиси, 1976.

[5] Տե՛ս ბატონიშვილი ვახუშტი <u>საქართველოს გეოგრაფია</u> , თფილისი, გამოცემა ჟურნალ "მოგზაურისა", 1904.

[6] Տե՛ս Царевич Вахушти, География Грузии, с. X.

[7] Քարթլիս ցխովրեբան տարբեր ժամանակներում գրված պատմությունների հավաքածու է: Ինքնին հասկանալի է, այդ պատմությունները խմբագրական որոշակի փոփոխություններով են հարմարեցվել միմյանց՝ մեկ ամբողջություն ներկայանալով, տե՛ս Վրաց ժամանակագրություն, (1207-1318), թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 5:

[8] Տե՛ս ქართლის ცხოვრება, ტომი 4, ბატონიშვილი ვახუშტი, აღწერა სამეფოსა საქართველოსა, თბილისი, 1973.

[9] Տե՛ս ქართლის ცხოვრება, ბატონიშვილი ვახუშტი, საქართველოს სამეფოს აღწერა, ნაწილი მეორე, ტომი 4, თბილისი, 2012. (այսուհետև՝ ქართლის ცხოვრება, ნაწილი მეორე, ტომი 4).

հատորում ներկայացված են, ըստ Վախուշտիի պարբերացման, Վրաստանի հին շրջանի պատմությունը և աշխարհագրությունը, իսկ V-ում՝ Նոր շրջանի պատմությունը: Ատենախոսությունը շարադրելիս օգտվել ենք վերը նշված երկու հրատարակություններից զուգահեռաբար: Նշենք, որ, բացառությամբ ծանոթագրությունների և թվային տվյալների որոշ անհամապատասխանությունների, տարբերությունները երկու հրատարակություններում նվազագույն են: Սակայն հաշվի առնելով, որ վերջին հրատարակությունը հասանելի է եղել միայն էլեկտրոնային տարբերակով, որում բացակայում է Ժամանակագրությունը, Ս. Ղաուղչիշվիլու հրատարակությունը մշտապես եղել է մեր ուշադրության կենտրոնում: Բացի այդ՝ այս վերջին հրատարակությունը, համեմատվելով ձեռագիր օրինակի հետ, թվայնացվել է[11]:

Վրացագիտության մեջ Վախուշտիի անձը և աշխատությունը մշտապես եղել են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Նրա անձի, գործունեության ու մատենագրական ժառանգության վերաբերյալ աշխատությունների հեղինակներ են Ի. Ջավախաշվիլին[12], Ս. Ջանաշիան[13], Դ. Բաքրաձեն[14], Շ. Մեսխիան[15], Լ. Մարուաշվիլին[16], Ն. Բերձենիշվիլին[17], Ի.

---

[10] Տե՛ս ქართლის ცხოვრება, ՝ბատոնիშვილი ვახուշտի, საქართველոს სამეფոს აღწერა, ნაწილი მეორე, ტომი 5, თბილისი, 2012. (այսուհետև՝ ქართლის ცხოვრება, ნაწილი მეორე, ტომი 5).

[11] Տե՛ս ქართლის ცხოვრება, ტომი 4, ՝ბատոնიშვილი ვახուշտի, აღწერა სამეფოსა საქართველოსა, თბილისი, 1973, (http://titus.uni-frankfurt.de/texte/etcg/cauc/mgeo/vaxtbagr/vaxtb.htm), (04.05. 2018):

[12] ՝ջავახიშვილი ი., ქართლის ცხოვრება, მისი, ძველი ქართული საისტორიო მწერლობა (V-XVIII სს.), თხზ., ტ. VIII, თბ., 1977, გვ. 298-315, նույնի ქართული საისტორიო ძეგლების ახალი გამოცემის შესახებ, მრავალთავი, V, თბ., 1975, გვ. 262-270.

[13] Джанашвили М., Вахушти и его трудь, Имперское русское географическое общество, Кавказский отдел, записки 1904 г., книга 24, выпсук 5, Тифлись, 1904.

[14] ՝ბაქრაძე დ., წინა-სიტყვაობა მესამე, ანუ ქართული ისტორიის წყაროები და ძველის ქართლის ცხოვრების ღირსება, წგნ.: ვახუშტი, საქართველოს ისტორია, განმარტებული და შევსებული ახლად შეძენილის არხეოლოგიურისა და ისტორიულის ცნობებით დ. ბაქრაძის მიერ, ნაწ. პირველი, ტფ., 1885, 1-344 გვ. , ՝գრიგოლია კ., ისევ ქართლის ცხოვრების შესახებ, მნათობი, 9, 1957, გვ. 118-124.

[15] Շ. Մեսխիայի աշխատությունները վերաբերում են ավելի հին շրջանի՝ Լեոնտի Մրովելուն, սակայն դրանցում նա նաև հարուստ տեղեկություններ է հայտնում Վախուշտիի աշխատանքի կառուցվածքի ու բովանդակության վերաբերյալ (տե՛ս Մելսեոս Ս., ՝ლეონტი მროველი საქართველოს ისტორიის ორი პერიოდის შესახებ, კრ. კავკასიის ხალხთა ისტორიის საკითხები, თბ., 1966, გვ. 119-130.)

[16] Маруашвили Л., Вахушти Багратиони, его предшественники и современники, Москва, 1956,

Մատուրելին[18], Վ. Գաբաշվիլին[19], և այլք: Վ. Գաբաշվիլին նաև Վախուշտիի կյանքին, գործունեությանը ու մատենագրական ժառանգությանը վերաբերող ծավալուն աշխատություն է հեղինակել[20]:

«Նոր Քարթլիս Ցխովրեբայի» համակարգման ուղղությամբ հատկապես մեծ աշխատանք է կատարել Կ. Գրիգոլիան[21]: Քարթլիս Ցխովրեբայի ընդհանրապես, ու Վախուշտիի երկի՝ մասնավորապես, հաղորդած տեղանվանագիտական տեղեկությունները լուսաբանելու ու պարզելու տեսանկյունից շատ կարևոր է Քարթլիս Ցխովրեբայի տեղանվանահնագիտական բառարանը, որը ներառում է վրաց ժամանակագրություններում առկա բոլոր տեղանունների բացատրությունները՝ ներառյալ տեղադրությունը և պատմական ակնարկ: Թեև այս բառարանում հանդիպող բացատրությունները հաճախ աչքի չեն ընկնում անաչառությամբ, հատկապես տարածքների պատկանելիության հետ կապված հարցերում, սակայն նրա դերը անփոխարինելի է բնակավայրերի աշխարհագրական դիրքերը պարզելու տեսանկյունից[22]:

Ռուսական գիտական շրջանակներում ևս Վախուշտիի աշխատանքը մշտապես եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում՝ շնորհիվ Մարի Բրոսեի, որը այն հանրայնացրեց ու բարձր գնահատեց: Նա հայտնաբերեց վրաց հեղինակին վերաբերող մի շարք կարևոր փաստեր և առաջինը հրատարակեց նրա «Աշխարհագրությունը»՝ ֆրանսերեն թարգմանությամբ և վեց քարտեզներով[23]: Բրոսեի գործունեության և հրատարակությունների շնորհիվ Վախուշտի Բագրատիոնիի աշխատանքները տարածում են ստացել նաև Եվրոպայում և հետազոտողները լայնորեն օգտվել են այդ հրատարակություններից Վրաստանի պատմության մի շարք հարցեր քննելիս[24]: Ժամանակակից հետազոտողներից Վախուշտիի կյանքին և գործունեությանը, ինչպես նաև պատմա-քաղաքական հայացքներին

---

[17] ბერძენიშვილი ნ., საქართველოს ისტორიის საკითხები, წიგნი IX, მასალები ავტორის არქივიდან, თბ., 1979.

[18] Матурели И. В., Материалы по грузинской картографии, Тбилиси, 1961.

[19] Габашвили В. Н., Историография Грузии (XI-XVII вв.), Очерки истории, исторические науки в СССР, т. 1, М., 1955, с. 138-145.

[20] გაბაშვილი ვ., ვახუშტი ბაგრატიონი, თბ., 1969.

[21] გრიგოლია კ., „ახალი ქართლის ცხოვრება“, ქსე, 2, თბ., 1977, გვ. 93-94; იგივე, ენციკლოპ. „საქართველო“, 1, 1997, გვ. 283-284.

[22] Տե՛ս *ქართლის ცხოვრების* **ტოპონარქეოლოგიური ლექსიკონი,** თბილისი, 2013.

[23] Տե՛ս Tsarévitch Wakhoucht, Description géographique de la Géorgie, d'après l'original autographe par M. Brosset, Saint-Pétersbourg, 1842.

[24] Տե՛ս, օր.՝ David Marshal Lang, The last years of Georgian Monarchy 1658-1832, New York, 1958:

վերաբերող մի շարք հոդվածներ ու գիտական աշխատություններ է հեղինակել Թ. Աբրամիձեն[25]:

Վախուշտիի աշխատությունը Քարթլիս Ցխովրեբայի համատեքստում դիտարկելու ու նրա տեղը վրացական պատմական երկերի շարքում որոշելու տեսանկյունից կարևոր է Կիրիլ Թումանովի մեծածավալ հոդվածը[26]: Վախուշտիի աշխատության աղբյուրների մասին ընդարձակ տեղեկություններ են պարունակում նաև Մ. Լորդքիփանիձեի ուսումնասիրությունները[27]: Հաշվի առնելով, որ Քարթլիս Ցխովրեբան ընդհանրապես և Վախուշտիի աշխատությունը մասնավորապես մշտապես եղել են վրացագետների ուշադրության կենտրոնում, կփորձենք սահմանափակվել միայն նշված հեղինակների ու նրանց առավել կարևոր աշխատությունների հիշատակումով:

Քննվող աշխատության գլխավոր առանձնահատկություններից մեկն այն է, որ Վախուշտիի երկը նախորդ շրջանի վրաց պատմագրական աշխատությունների, ժամանակագրությունների, պետական փաստաթղթերի յուրահատուկ համահավաք գործ է, որը կազմել և խմբագրել է Վախուշտին: Մեր կատարած հետազոտության ընթացքում մշտապես օգտվել ենք Բ. Էգնատիշվիլու՝ «Նոր Քարթլիս Ցխովրեբայից», որի տրամաբանական շարունակությունը կարելի է համարել Վախուշտիի գործը: Այս աշխատության ժամանակային ընդգրկումը գրեթե ամբողջապես համընկնում է Վախուշտիի երկի հետ, այն տարբերությամբ, որ Էգնատեշվիլին իր աշխատությունը հասցնում է մինչև 1695 թ.: Այդ այսպես կոչված «Նոր Քարթլիս Ցխովրեբայի» նրա տարբերակների երեք տեքստերն էլ հրատարակվել են «Քարթլիս Ցխովրեբայի II հատորում»[28]:

XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին Վախուշտիի աշխատանքները և նրա հեղինակած ատլասները առկա էին սահմանափակ քանակով և ձեռագիր էին: Որպես արդյունք, դրանք հասանելի էին մարդկանց շատ նեղ շրջանակի: Դրանց կրկնօրինակները որոշ քանակությամբ առկա էին վրաց ավատատիրական ավագանու առաջադեմ մասի մոտ: Քարտեզների ռուսերեն թարգմանություններ կային Ռուսաստանի գիտությունների ակադեմիայում և

---

[25] Абрамидзе Теймураз, Географические и исторические изыскания Вахушти Багратиони в контексте грузинской эпохи 18-ого века, Вестник КГУ им. Н.А. Некрасова, № 1, 2013:

[26] Տե՛ս C. Toumanouf, Medieval Georgian historical literature (7th-15th centuries), Traditio, vol. 1. 1943, 139-182 pp.

[27] Տե՛ս მარიამ ლორთქიფანიძე, რა არის ქართლის ცხოვრება, თბილისი, 1989 წ., ლორთქიფანიძე მ., მარი ბროსე და ქართლის ცხოვრების ზოგი საკითხი, მეოთხე საერთაშორისო ქართველოლოგიური სიმპოზიუმის მასალები, თბ., 2005, გვ. 15-18 (რეზიუმე ინგლისურ ენაზე).

[28] Տե՛ս ქართლის ცხოვრება, ტომი 2, ახალი ქართლის ცხოვრება, თბილისი, 1959.

բանակի գլխավոր շտաբում: Արդեն այս ժամանակահատվածում Վախուշտիի աշխատանքները շատ բարձր էին գնահատվում գիտական և կիրառական տեսանկյունից[29]: Սակայն հարկ է արձանագրել, որ այդ բոլոր ուսումնասիրություններում Վախուշտիի երկերը դիտարկվել են որպես Վրաստանի պատմության ուսումնասիրման սկզբնաղբյուրներ:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի վերաբերյալ հարուստ տեղեկություններ ենք հանդիպում հայկական աղբյուրներում: Առավել հանգամանալից տեղեկություններ են պարունակում Գրիգոր Դարանաղեցու[30], Առաքել Դավրիժեցու[31], Աբրահամ Կրետացու[32], Աբրահամ Երևանցու[33], Զաքարիա Քանաքեռցու[34] աշխատությունները: Եսայի Հասան-Ջալալյանի աշխատությունը[35] XVIII դ. առաջին քառորդի Հայաստանում և Վրաստանում տեղի ունեցող իրադարձությունների կարևորագույն սկզբնաղբյուր է, որի հաղորդած տեղեկությունները շատ դեպքերում համընկնում են Վախուշտիի հայտնած տեղեկությունների հետ, ընդ որում, որոշ դեպքերում այնպիսի մանրամասնություններով, որ տպավորություն է ստեղծվում, թե հեղինակները ծանոթ են եղել միմյանց գործերին: Պատճառն ակնհայտ է՝ Քարթլիի համար բախտորոշ ժամանակաշրջանում՝ դեպի Գանձակ Վախթանգ արքայի երկու արշավանքների միջև ընկած մի քանի ամիսների ընթացքում Եսայի կաթողիկոսը գտնվել է Թբիլիսիում և ակտիվորեն մասնակցել տեղի ունեցող իրադարձություններին[36] և ունեցել է այն նույն տեղեկություններն՝ ինչ Վախուշտին:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի հայոց պատմության վերաբերյալ հարուստ տեղեկություններ են հաղորդում եվրոպացի ճանապարհորդները:

---

[29] Маруашвили Л., Вахушти Багратиони, его предшественники и современники, Москва, 1956, с. 28.

[30] Տե՛ս Գրիգոր Կամախեցի կամ Դարանաղցի, ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915:

[31] Տե՛ս Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1884; Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, Աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, 1990:

[32] Տե՛ս Աբրահամ կաթողիկոս Կրետացի, Պատմութիւն անցիցն իւրոց և Նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870; Авраам Кретаци, Повествование, Ереван, 1973 (հայ. բնագիր ռուսերեն թարգմանությամբ):

[33] Տե՛ս Աբրահամ Երեւանցի, Պատմութիւն պատերազմացն. 1721-1736 թուի, Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանօթութիւններ պատրաստեց Հ. Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ – Ս. Ղազար, 1977:

[34] Տե՛ս Զաքարիա Սարկաւագ, Պատմագրութիւն, հտ. 1-ին, Վ աղարշապատ, 1870:

[35] Տե՛ս Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Յերուսաղէմ, 1868:

[36] Տե՛ս მაისურაძე გურამ, ქართველი და სომხების ურთიერთობა XIII – XVIII საუკუნეებში, თბილისი, 1982, გვ. 206.

Ժան Շարդենն իր աշխատությունում մանրամասն տեղեկություններ է հաղորդում Վրաստանի ու Հայաստանի վերաբերյալ[37]: Հիշարժան է նաև ֆրանսիացի բուսաբան Թուրնեֆորը, ով եզակի տեղեկություններ է հաղորդում հատկապես Վրաստանում ապրող հայ բնակչության և ընդհանրապես Վրաստանի ազգային-դավանական կազմի վերաբերյալ[38]: Եվրոպացի ճանապարհորդների տեղեկությունների վերհանման, հայերենով թարգմանության և հրատարակման գործում անուրանալի է Մ. Զուլալյանի դերը, ով իր աշխատությունում[39] ներկայացնում է հայոց պատմության XV-XVIII դդ. իրադարձությունները ըստ եվրոպացիների ուղեգրությունների: Մ. Զուլալյանը հեղինակել է խնդրո առարկա ժամանակաշրջանին վերաբերող այլ արժեքավոր աշխատություններ ևս[40]: Մեր ուսումնասիրության շրջանակներն ընդգրկող հայոց պատմության տվյալ ժամանակահատվածին առնչվող մի շարք հարցերի անդրադարձել է Թ. Հակոբյանը[41]: Ուսումնասիրվող ժամանակաշրջանի Հայաստանի հարակից երկրների պատմության մի շարք հարցերի լուսաբանմանն է նվիրված «Հայաստանի հարակից երկրների պատմություն» աշխատության երկրորդ հատորը[42]:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, եզրակացությունից ու հավելվածից:

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, հիմնավորված են հետազոտության ժամանակագրական ու տարածական սահմանները, տրված է օգտագործված աղբյուրների ու գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ՎԱԽՈՒՇՏԻՆ ՈՒ ՆՐԱ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ», բաղկացած է երեք ենթագլխից:

---

[37] Жан Шарден, Путешествие Шардена по Закавказью в 1672-1673 гг., Пер. Е.В. Бахутовой и Д.П. Носовича, Тифлис, 1902.

[38] Հեղինակի աշխատանքի անհասանելիության պատճառով օգտվել ենք ռուսերեն մասնակի թարգմանությունից՝ Кобяков Д., Краткий исторический очерк города Тифлиса, Тифлис, 1880.

[39] Տե՛ս Զուլալյան Մ., Հայ ժողովրդի XV-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Երևան, 1990:

[40] Տե՛ս Зулалян М., Армения в первой половине XVI века, Москва, 1971, նույնի՝ Թուրք-պարսկական պատերազմները Հայաստանում և նրանց հետևանքները (1590-1639), ԼՀԳ, 1966, 2, Նույնի Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980:

[41] Տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը (1500-1800), Երևան, 1971:

[42] Հայաստանի հարակից երկրների պատմություն, Հ. 2, Երևան, 2016:

Առաջին ենթագլխում՝ «Վախուշտիի կյանքը, գործունեությունը, պատմա-քաղաքական հայացքները», ներկայացված է հեղինակի կյանքը, գործունեությունը, մասնակցությունը Վրաստանում տեղի ունեցող քաղաքական գործընթացներին ու այդ գործընթացների ազդեցությունը Վախուշտի պատմագրի ու աշխարհագետի հայացքների ձևավորման վրա:

Երկրորդ ենթագլխում՝ «Վախուշտիի աշխատության կառուցվածքն ու բովանդակությունը», ցույց ենք տվել «Վրացական թագավորության նկարագրությունը» աշխատության կառուցվածքը, բաժանել այն բովանդակային մասերի, բացահայտել հեղինակի կատարած աշխատանքի տրամաբանությունը:

Երրորդ ենթագլխում՝ «Վախուշտիի երկի աղբյուրները և նրա տեղը ժամանակի նմանատիպ այլ աշխատությունների շարքում», փորձ ենք կատարել պարզելու աշխատության աղբյուրները, համեմատության եզրեր անցկացրել Վախուշտիի աշխատության և ժամանակի այլ նմանատիպ աշխատությունների՝ մասնավորապես Փարսադան Գորգիջանիձեի և Բերի Էգնատիշվիլու աշխատությունների հետ: Ցույց ենք տվել նաև մեր կողմից ուսումնասիրվող աշխատության տարբերությունները և նմանությունները այս հեղինակների աշխատությունների հետ համեմատած:

Երկրորդ գլուխը՝ « XV-XVIII ԴԱՐԵՐԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՎԱԽՈՒՇՏԻ ԲԱԳՐԱՏԻՈՆԻԻ», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Վրաստանը և հարակից երկրները XV դարի երկրորդ կեսից մինչև XVI դարի վերջ ընկած ժամանակաշրջանում համաձայն Վախուշտիի հաղորդած տեղեկությունների» ներկայացված են թուրքմենական ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի գերիշխանության ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները, ինչպես նաև Սեֆյանների առաջին արշավանքները դեպի Հայաստան ու Վրաստան և տարածաշրջանի նվաճումը նրանց կողմից համաձայն Վախուշտիի վկայությունների: Այս ժամանակաշրջանին վերաբերող Վախուշտիի հաղորդած տեղեկությունները աչքի են ընկնում համակողմանիությամբ և ճշտությամբ: Նա բավականին մանրամասն նկարագրում է թյուրքերի, այնուհետև Սեֆյանների արշավանքները դեպի Վրաստան ու հյուսիսարևելյան Հայաստան՝ այս ամենը ներկայացնելով Վրաստանի տրոհման և թուլացման համատեքստում:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայաստանը և Վրաստանը Սեֆյան պետության և Օսմանյան կայսրության հակասության ոլորտում ըստ Վախուշտիի հաղորդած տեղեկությունների» անդրադարձ ենք կատարել Վախուշտիի աշխատությունում հանդիպող, Հայաստանին ու Վրաստանին վերաբերող քաղաքական իրադարձությունների մասին վկայություններին, որոնք ընդգրկում են XVI դարի սկզբից մինչև XVII դարի վերջ ընկած ժամանակաշրջանը:

Երրորդ ենթագլխում՝ «XVIII դարի առաջին կեսի իրադարձությունները Վախուշտի Արքայազնի երկում» ներկայացվում է Վախուշտիի ապրած ժամանակաշրջանի վերաբերյալ նրա հաղորդած տեղեկությունների մասին: Այս ժամանակաշրջանի վերաբերյալ հեղինակի հաղորդած տեղեկությունները մանրամասն են, սակայն Վրաստանի և Հայաստանի համար այս վճռորոշ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները ներկայացնելիս Վախուշտին համեմատաբար քիչ է անդրադառնում Հայաստանին ու չի հաղորդում մի շարք կարևորագույն իրադարձությունների մասին:

Երրորդ գլուխը՝ «ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱԽՈՒՇՏԻԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ», բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ *«Թբիլիսին և տեղի հայերը XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարի սկզբին ըստ Վախուշտիի և այլ աղբյուրների»* ներկայացրել ենք հեղինակի կողմից կատարված Թբիլիսիի մանրամասն նկարագրությունը, զուգահեռներ անցկացրել քաղաքի մասին այլ վկայությունների հետ, փորձ կատարել պարզել հայ բնակչության տեղը և դերը քաղաքի կյանքում, մոտավոր թվաքանակը:

Երկրորդ ենթագլխում՝ «Աշոցքի տարածաշրջանը XVIII դարի առաջին տասնամյակներին ըստ Վախուշտի Բագրատիոնիի հիշատակու-թյունների» ներկայացված է պատմական Այրարատ աշխարհի Աշոցք գավառի մասին տեղեկույթը Վախուշտիի երկում: Այլ աղբյուրների հետ համադրելով պարզել ենք տարածքի տեղանունների թյուրքական ծագման պատճառները, միաժամանակ, համադրելով Վախուշտիի հաղորդած տեղեկությունները այլ աղբյուրների հետ, հիմնավորել ենք, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում այս շրջանի բնակչության բացարձակ մեծամասնությունը եղել են հայեր:

Երրորդ ենթագլխում՝ «Հայերի տեղաբաշխումը Վրաստանում համաձայն Վախուշտիի հաղորդած տեղեկությունների», ելնելով Վախուշտիի հաղորդած տեղեկություններից, պարզել ենք հայ բնակչության հիմնական կենտրոնացման շրջանները Վրաստանի տարածքում: Վախուշտիի հաղորդած տեղեկությունները հիմնավորում են այն փաստը, որ XVIII դարի առաջին տասնամյակներին Վրաստանի մի շարք շրջաններում՝ Թբիլիսիում ու շրջակայքում, Գորիում ու դրան մոտ գտնվող ոչ մեծ բնակավայրերում, Մուխրանին հարակից ոչ մեծ բնակավայրերում, Ցխինվալ քաղաքում և հարակից շրջանների ոչ մեծ բնակավայրերում, Քութայիսում, հայ բնակչությունը բավականին մեծ թիվ էր կազմում: Փաստորեն, հայության կենտրոնացված բնակության տարածքը արևմուտքում սկսվում էր Քութայիսից և արևելքում հասնում Ռուսթավի, ինչպես նաև տարածվում հյուսիս՝ մինչև ներկայիս Ցխինվալ քաղաքը ներառյալ, իսկ Քարթլիի

վարչատարածքային կազմում գտնվող հայկական երկրամասերում բացարձակ մեծամասնություն էր:

Չորրորդ ենթագլխում՝ «Հայաստանին և հայերին վերաբերող այլ տեղեկություններ Վախուշտի Արքայազնի երկում» անդրադարձել ենք մեծամասամբ Վախուշտիի հաղորդած տնտեսական բնույթի տեղեկություններին, դատելով որոնցից կարելի է եզրակացնել, որ Քարթլիի թագավորության կազմում գտնվող հայկական և հայաբնակ տարածքներում զարգացած էին տնտեսության բոլոր ճյուղերը և Վրաստանի տնտեսական համակարգում շատ դեպքերում ունեին կարևոր դեր: Ռազմավարական կարևորագույն նշանակությունից բացի՝ նաև տնտեսական շահեկան հնարավորություններն էին պատճառը, որ վրացական, թուրքական, պարսկական իշխանությունները շարունակ պայքարում էին այս շրջաններին տիրելու համար:

Եզրակացություններում ի մի են բերվել ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրակացությունները:

- Վախուշտի Բագրատիոնիի աշխատությունը շահեկանորեն տարբերվում է ժամանակի վրաց պատմագրության այլ գործերից՝ կազմված լինելով բազմաթիվ և բազմաբովանդակ աղբյուրների կիրառմամբ և բովանդակային լայն ընդգրկմամբ:
- Ատենախոսության մեջ օգտվել ենք տարբեր աղբյուրներից, մասնավորապես վրացական սկզբնաղբյուրներից ու ուսումնասիրություններից, որոնց համադրումն ու կատարած եզրահանգումները մեր ուսումնասիրության շրջանակներն ընդգրկող ժամանակաշրջանի տարաբնույթ հարցերի հետազոտման համար առանցքային դեր ունեն:
- Ի մի բերելով Վախուշտի Արքայազնի մատենագրական ժառանգությունը՝ փաստենք, որ այն, բացի բարձրարժեք սկզբնաղբյուր լինելուց, ունեցել է նաև կիրառական կարևոր նշանակություն: Սակայն առավել լայն սկսել է օգտագործվել միայն Մ. Բրոսեի կողմից ուսումնասիրվելուց և մասամբ հրատարակվելուց հետո:
- Վախուշտիի աշխատության ստեղծումը պայմանավորված է եղել քաղաքական պայմաններով, այն գրվել է Վրաստանի համար ծանր ու բախտորոշ ժամանակաշրջանում, իսկ աշխատանքի հիմնական գաղափարը Վրաստանի միասնությունն ու անկախությունն է, սակայն ապրելով ու իր աշխատանքը հեղինակելով Ռուսաստանում, հեղինակը միասնական Վրաաստանի անկախությունը տեսնում էր ռուսական հովանու ներքո:
- Վախուշտիի աշխատանքը կարևոր տեղեկություններ է բովանդակում XV-XVIII դդ. իրադարձությունների վերաբերյալ, որոնք հիմնականում անաչառ են ու արտացոլում են պատմական իրադարձությունների ճշտգրիտ ընթացքը: Հատկապես հարուստ տեղեկություններ են հաղորդվում Քարթլիի

թագավորության քաղաքականության վերաբերյալ: Հեղինակը չի շրջանցում նաև վրացական պետական կազմավորումների միջև եղած հարաբերությունները, Սեֆյան Իրանի ու Օսմանյան կայսրության քաղաքականությունը, նրանց միջև տեղի ունեցող բախումները: Աշխատության մեր անդրադարձ է կատարվում նաև Երևանի ու Գանձակի խանությունների մասին: Բոլոր այս տեղեկությունները ուղղակիորեն կամ անուղղակի ձևով առնչվում են Հայաստանին ու հայերին, քանի որ, ինչպես արդեն բազմիցս նշվել է, խնդրո առարկա ժամանակաշրջանում Հայաստանի հյուսիսարևելյան երկրամասերը գտնվում էին վրացական վարչա-քաղաքական կազմավորումների կազմում: Բացի այդ՝ հեղինակը հաճախ ներկայացնում է տարածաշրջանային նշանակության իրադարձություններ, որոնք առնչություն ունեն նաև Հաստաանին:

• Վախուշտիի աշխատանքի պատմական մասը հանդիսանում է նախորդ ժամանակաշրջանի վրացական պատմագրական աշխատությունների, ինչպես նաև պարսկական, հայկական, լեհական տարեգրությունների յուրահատուկ միասնություն՝ խմբագրված և լրացված հեղինակի կողմից: Ընդ որում այս աշխատանքի հիմնական տարբերությունը Նոր Քարթլիս Ցխովրեբայի այլ տեքստերից Վրաստանի պատմությունը առանձին պետական միավորների օրինակով ներկայացնելն է: Աշխարհագրական մասը հիմնականում հեղինակի դիտարկումների ու ուսումնասիրությունների արդյունք է: Խոսքը վերաբերում է հատկապես Քարթլիի կազմում գտնվող տարածքների նկարագրություններին, որոնք աշխատությունում լավագույնս են ներկայացված:

• Մեր կատարած հետազոտության ընթացքում հանգեցինք այն եզրակացության, որ դատելով հայերի ու Հայաստանի մասին հաղորդվող տեղեկությունների բնույթից՝ Վախուշտի Արքայազնը չի ունեցել ընդգծված հակահայ կամ հայամետ վերաբերմունք և վերջինս կախված է եղել լոկ հայերի՝ Քարթլիի կենտրոնական իշխանությունների հանդեպ տվյալ պահին ունեցած դիրքորոշումից:

• Համաձայն Վախուշտիի հաղորդած տեղեկությունների՝ հայ բնակչությունը կատարյալ մեծամասնություն էր կազմում՝ Լոռիում, Տաշիրում, Աշոցքում, Դեբեդի հովտում, իսկ ներկայիս Վրաստանի տարածքում՝ հայկական առավել խիտ բնակչության սահմանը արևմուտքում հասնում և ընդգրկում էր Քութայիսը, արևելքում՝ Ռուսթավը, իսկ հյուսիսում Ցխինվալը, ընդ որում Թբիլիսիում, որը գտնվում էր այս տարածքի կենտրոնական մասում, կազմում էր բացարձակ մեծամասնություն:

• Դատելով Վախուշտի Արքայազնի տեղեկություններից՝ հայ բնակչության դերը Վրաստանի քաղաքական կյանքում սահմանափակ էր, տնտեսական կյանքում՝ առաջնային՝ հաշվի առնելով հայ բնակչության վճռորոշ դերը Վրաստանի առևտրում և Քարթլիի կազմում գտնվող հայկական

տարածքների շահեկան տնտեսական հնարավորությունները: Վրացական քաղաքներում ապրող հայությունն իր հերթին հանդիսանում էր արքայական իշխանության հենարան ու կազմում էր Վրաստանի՝ առևտրական նշանակություն ունեցող քաղաքների ազգաբնակչության մեծամասնությունը:

• Ըստ Վախուշտի Արքայազնի՝ հայկական տարածքներից Աշոցքը, Լոռին, Տաշիրը, Փամբակը, Ղազախը գտնվում էին Քարթլիի վարչական կազմում: Տնտեսական և ռազմավարական առումով կարևոր նշանակություն ուներ Լոռի-Տաշիրը, որը հարուստ էր օգտակար հանածոներով և այնտեղ զարգացած էին տնտեսության բոլոր ճյուղերը: Աշոցքը կամ Ղայղուլին հաճախ ծառայում էր հենարան Սեֆյան իշխանությունների համար դեպի Ախալցխայի վիլայեթ և օսմանահպատակ այլ տարածքներ ներխուժելու համար, Ղազախը, որում պարսկական իշխանությունների ազգային քաղաքականության հետևանքով թյուրքալեզու տարրը զգալի թիվ էր կազմում, հենարան էր դարձել դեպի Կախեթ արշավելու համար: Ախալցխայի կազմում գտնվող հայկական տարածքները թուրքական իշխանությունների նախաձեռնությամբ վեր էին ածվել ռազմականացված շրջանների ու հենարանի դեպի հյուսիս՝ Վրաստան ու հարավ-արևելք՝ Արևելյան Հայաստան արշավանքների համար:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրատարակություններում.

1. Վախուշտի Արքայազնի կյանքը, գործունեությունը, պատմաքաղաքական հայացքները, Հայագիտական հանդես, Երևան, 2018, Թիվ 1 (39), էջ 171-181:
2. Թիֆլիսում բնակվող հայ բնակչությանը վերաբերող տեղեկությունները Վախուշտի Արքայազնի «Վրացական թագավորության նկարագրությունը» երկում, Ակունք գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2018, Թիվ 1 (18), էջ 77-83:
3. Հայերի տեղաբաշխումը Վրաստանում ըստ Վախուշտի Արքայազնի, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, Երևան, 2018, էջ 135-143:
4. Աշոցքի տարածաշրջանը 18-րդ դարի առաջին տասնամյակներին ըստ Վախուշտի Բագրատիոնիի հիշատակությունների, Պատմություն և մշակույթ, Երևան, 2017, էջ 153-158:
5. Հայաստանին և հայերին վերաբերող տեղեկություններ Վախուշտի Արքայազնի երկում, Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, Երևան, 2018, Թիվ 1 (25), էջ 61-66:
6. Երևանի պաշարումն ու գրավումը Շահ Աբասի կողմից՝ ըստ Վախուշտի Արքայազնի, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2018, Թիվ 1 (652), հունվար-ապրիլ, էջ 109-116:

КАРАПЕТЯН ДАВИТ АРТУРОВИЧ

ТРУД «ОПИСАНИЕ ГРУЗИНСКОГО ЦАРСТВА» ЦАРЕВИЧА ВАХУШТИ БАГРАТИОНИ КАК ПЕРВОИСТОЧНИК ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКОЙ ИСТОРИИ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 «Историография, источниковедение».

Защита состоится 8-ого сентября 2020 г., в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной академии наук РА (0019, Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Данное исследование посвящено источниковедческому изучению «Описание грузинского царства», автором которого является один из ярких представителей грузинской историографии Вахушти Багратиони, с целью раскрытия имеющееся в ней информации об армянах и Армении, и имплементации ее в научный оборот. Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы. Во введении обоснованы важность и актуальность исследования, а также научная новизна работы. Далее указаны цели и задачи, поставленные перед автором, проанализированы использованные первоисточники и научная литература.

В первой главе–«Вахушти и его летописное наследие», представлены жизнь и деятельность Вахушти, структура, содержание, источники его труда, а также определено место среди аналогичным произведении.

Во второй главе–«История Армении XV-XVIII вв. согласно Вахушти Багратиони», представлены сведения политического характера имеющейся в труде Вахушти об истории Армении XV-XVIII вв. Параллельно, сопоставляя с другими источниками, проверялась достоверность этих сведении. В этой главе представлены сведения Вахушти со времен владычества тюркских племен ак-коюнлу и кара-коюнлу и их нашествий на Грузию и Армению. Детально изучены эти сведения и информация о ирано-турецких войнах, а также последствия этих войн для Южного Кавказа. В труде имеется информация о походе Шаха Аббаса на Ереван и о последствиях этого похода, в течение которого Картлийский царь был вынужден отказаться от региона Лори. Сведения Вахушти помогают дополнить многие вопросы армянской

истории данного периода. Также изучены сведения Вахушти о событиях 20-ых годов 18-ого века, которые частично относятся к армянам и к Армении. Важность данной части труда в том, что Вахушти лично принимал участие в политической жизни Грузии и лично посещал армянские регионы, о чем свидетельствует его труд. Все эти сведения выявлены и изложены нами в нашей работе.

В третьей главе–«Вопросы исторической географии и социально-экономические сведения в труде Вахушти», представлены данные Вахушти по Тбилиси и Ашоцкому региону, согласно которым определена роль и экономические возможности армян в указанных местах. А также установлены основные ареалы проживания армянского населения в Грузии. В нашей работе доказано, что армянское население в пределах армянских земель - Лори, Ташир, Ашоцк, Джавахк и т.д., входящих в состав грузинских политических единиц составляло абсолютное большинство. Подтверждён факт высокого экономического потенциала данных регионов.

В заключении подведены итоги проведенной работы и изложены основные выводы исследования.

KARAPETYAN DAVIT ARTUR

THE WORK OF "DESCRIPTION OF THE KINGDOM OF GEORGIA" BY VAKHUSHTI BAGRATIONI AS A PRIMARY SOURCE FOR STUDYING ARMENIAN HISTORY

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of «Historiography, Source Study» 07.00.05.

The defense of the dissertation will be held on September 8, 2020, at 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

The research is on the source study of "Description of the Kingdom of Georgia" authored by Vakhushti Bagrationi, one of the illustrious representatives of Georgian historiography that helps to reveal the information about Armenia and the Armenians and to implement for scientific purposes.

The dissertation consists of an Introduction, three Chapters, a Conclusion and the list of used sources and literature. The introduction focuses on the importance and relevance of the study, as well as the scientific novelty of the work. The goals and tasks pursued by the author are highlighted and the used primary sources and scientific literature are analyzed.

The first chapter, entitled "Vakhushti and his Chronicle Heritage", defines the life and work activity of Vakhushti, states the structure, the content, the sources for his work, as well as the place among analogous compositions .

The second chapter entitled "History of Armenia in the XV -XVIII CC. According To Vakhushti Bagrationi", introduces the evidence of history of Armenia (XV-XVIII cc) from the political viewpoint as mentioned in the work by Vakhushti. Parallelly, the authenticity of the evidence has been proven by using other sources. The chapter also introduces information on the information on the domination of the Turkic tribes of Ak Koyunlu and Kara Koyunlu undertook invasions of both Georgia and Armenia. Also the information about the chapter also proved the detailed study of Iranian-Turkish wars and the consequences of those wars for the South Caucasus. The work contains information on the campaign of Shah Abbas to Yerevan and on the consequences of the campaign, during which the Kartli king was forced to abandon the Lori Region. The

information provided by Vakhushti helps to supplement many issues of the Armenian history of this period. The events of the 20s of the XVIII century that partially relate to the Armenians and Armenia have also been studied. The importance of this part of the work is that Vakhushti personally participated in the political life of Georgia and visited the Armenian regions, as evidenced by his work. All the information has been revealed and stated in the work.

The third chapter entitled "Issues of Historical Geography and Socio-Economic Evidence in Vakhushti's Work" presents Vakhushti's data on Tbilisi and the Ashotsk region, according to which the role and economic potential of the Armenians in the mentioned places have been presented. Moreover, the main areas of residence of the Armenian population in Georgia have been specified. In our work it is proved that the Armenian population within the Armenian lands – Lori, Tashir, Ashotsk, Javakhk, etc., that were part of the Georgian political units, constituted an absolute majority. The fact of the high economic potential of these regions has been substantiated.

In the conclusion, the results of the implemented work are summarized and the main deductions of the study have been stated.